

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.12.2015

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը (2015թ.) /Զեկ. Վ. Ալեքսանյան/:
2. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Վ. Ալեքսանյան/:
3. 2015-2016 ուստարվա ձմեռային քննաշրջանի քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը /Զեկ. Վ. Ալեքսանյան/:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՅԻՆ՝ դեկան Վ. Ալեքսանյանը հանգամանալի զեկուցում ներկայացրեց 2015թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին: Նա անդրադարձավ ամբիոնային գործունեությանը, ուսանողական ինքնակառավարման կառույցների գործունեությանը, ուսանողների հետ տարվող աշխատանքներին և դեկանատի ընթացիկ կազմակերպական գործերին: Սկզբում նա վիճակագրական տվյալներ ներկայացրեց ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողության թվաքանակի մասին: Այնուհետև նշեց, որ ֆակուլտետի 2015թ. գործունեությունն իրականացվել է ԵՊՀ ԻՄ 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի դրույթներին համապատասխան: Կատարվել է ֆակուլտետի մասնագիտությունների ճշգրտում բակալավրի կրթական ծրագրում, ինչը բխում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկից: 2015-2016 ուստարվանից կատարվեց դիմորդների ընդունելություն «Հոգեբանություն» մասնագիտությամբ: Անժխտելի է, որ հոգեբանի որակավորում ունեցող կադրերի պահանջարկը մեր հասարակության մեջ գնալով ավելանում է: Այս տարի հաստատվեց ֆակուլտետի

2016-2017ուստարվա մասնագիտությունների ցանկը: Այն համալրվել է «Տարրական կրթություն» մասնագիտությամբ, որի պահանջարկը տարածաշրջանի դպրոցներում բավականին մեծ է:

Վերափոխվել են առարկայական ծրագրերի ճնշող մասը, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ֆակուլտետի մասնագիտությունների կրթական մոդուլներում: Դեկանը շեշտեց, որ պարբերաբար ֆակուլտետում վերանայվում են ուսանողների գնահատման և ատեստավորման առկա ձևերը: Քննարկումներ են կատարվում ուսումնառության ելքային կրթական արդյունքներով պայմանավորված գնահատման նոր ձևեր ներդնելու ուղղությամբ: Նա հանգամանալի շարադրեց ամբիոնների կատարած գիտամանկավարժական աշխատանքները և միջոցառումները: Արժևորելով կատարածը՝ նա ասաց, որ դրանք հետապնդել են ուսուցողական նպատակ և նվիրված են եղել այս կամ այն նշանավոր գործչին կամ նշանակալի իրադարձությանը (*հաշվետվությունը կցվում է*):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի 2015թ. հաշվետվությունը գնահատել բավարար:

ԼՄԵՑԻՆ՝ օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը հայտնեց, որ երկրորդ ընթացիկ քննությունները իրականացվել են նախապես կազմված ժամանակացույցով: Ընթացիկ քննությունների և ստուգումների ճիշտ կազմակերպումը կարևոր դեր ունի ուսանողների գիտելիքների մաս-մաս ստուգման մեխանիզմի կատարելագործման գործում: Հարկ է նշել, որ այս կիսամյակ ընթացիկ քննություններն ու ստուգումները իրականացվել են տարբեր մեթոդներով: Որոշ դասախոսներ ուսանողների գիտելիքները ստուգել են հարցը ամբողջական շարադրելու մեթոդով, իսկ ոմանք՝ քննական թեստերով: Քննական թեստերի կազմման գործում կիսամյակից կիսամյակ նկատվում է մասնագիտական կատարելագործում: Սակայն դասախոսներից ոմանք քննական

թեստերը դեռևս բավականին մատչելի են կազմում և այդ պատճառով մի շարք առարկաների գծով արձանագրվել են բարձր արդյունքներ: Այդ բանը հատկապես նկատելի էր «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության դասախոսների շրջանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ՀԱՄԱՐՆ՝ դեկանը գեկուցեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Վերստին շեշտադրվեց քննությունների ընթացքում դասախոսների կողմից անաչառ վերաբերմունքը: Ուսանողը պետք է քննասենյակից հեռանա իր ստացած միավորի հավաստիության համոզվածությամբ: Դեկանը ՈԻԽ և ՈԻԳԸ ուսանողներին հորդորեց ներկա գտնվել քննական գործընթացներում՝ կանխելու հնարավոր սուբյեկտիվիզմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Վ. Վանեսյանը, Դ. Քոքոբեյլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2015-2016 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան
Ս. Խաչատրյան